



ԱՆՈՏԱՑԻՍ

Լարիսա Ավետիսյան,

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարան,

Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի ղեկավար

Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանում գիտելիքների գնահատման նոր համակարգի ներդրման արդյունքների մասին

Բժշկական կրթության համակարգում կիրառվում են գիտելիքների գնահատման տարբեր եղանակներ, որոնցից են պորտֆոլիոնները, օբյեկտիվ կազմված կլինիկական քննությունները, ձևափոխված ակնարկային հարցերը և այլն: Միայն գնահատման տարբեր մեթոդների կիրառումը և գիտելիքների բազմատեսակ գնահատումը կարող է ժամանակի ընթացքում մասամբ հատուցել այս կամ այն մեթոդի թերությունները: ԵՊԲՀ-ի ուսումնական պրոցեսում ուսանողների գիտելիքների գնահատման թեստային ձևաչափը կիրառվում է 2003թ-ից: Ելնելով նրանից, որ ԵՊԲՀ-ում թեստային հարցումների և քննությունների ժամանակ կիրառվում են թեստային հարցման միայն 2 տարբերակ, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ թեստերի միջոցով գործնական առաջադրանքներն ընդհանրապես չեն գնահատվում, պարզ էր դառնում, որ գիտելիքների գնահատման գործող համակարգը ենթադրում է փոփոխություններ:

2015թ ապրիլ ամսին մշակված մոդելը նպատակ է հետապնդում ապահովել համաչափ ուսումնական գործընթաց՝ ուսանողների գիտելիքների ամենօրյա գնահատման միջոցով խթանել նրանց ամենօրյա ինքնուրույն աշխատանքը, ապահովել հետադարձ կապ՝ ուսանողներին հնարավորություն տալով շտկելու և բարելավելու իրենց գիտելիքներն ու կարողությունները, գիտելիքների գնահատման գործընթացում կարևորել ուսումնառության մի շարք բաղադրիչներ՝ այդ թվում նաև հետազոտականը: Գիտելիքների գնահատման նոր համակարգը ներառում է հետևյալ բաղադրիչները

- ընթացիկ առաջադիմություն (գնահատում բանավոր կամ գրավոր ձևաչափով),
- հետազոտական աշխատանք,
- քննություն:

Մոդելը փորձարկվեց 2015թ-ի աշնանային կիսամյակում: Նոր համակարգի վերաբերյալ ուսանողների կարծիքն իմանալու համար համալսարանի կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի կողմից անցկացվեց հարցում: Հարցաթերթի հարցերը վերաբերվում էին ինչպես ամբողջ համակարգի և նրա առանձին բաղադրիչների գնահատմանը, այնպես էլ գործող համակարգի հետ համեմատական վերլուծությանը և ուսանողների կողմից որևէ դիտողությանը և



առաջարկությանը: Նշենք, որ հարցմանը մասնակցեցին այդ մոդելով առարկան անցած ուսանողների 92%-ը: Նոր համակարգը «5» բալով (ամենաբարձր գնահատականով) գնահատել էր ուսանողների 52,7%-ը, «1»-ով՝ 1,8%:

«Ի՞նչը կցանկանայիք փոխել գնահատման նոր համակարգում» հարցին ուսանողների կեսից ավելին նշել են «բաղադրիչների համամասնությունը» պատասխանը, 23%-ը առաջարկել է հետազոտական բաղադրիչին հատկացվող բալը կրկնապատկել: Բոլոր բաղադրիչները ուսանողների 89%-ի կողմից գնահատվել են օբյեկտիվ և խիստ օբյեկտիվ: Ըստ հարցման արդյունքների ուսանողների ավելի քան 83%-ը բավարարված էր ստացված վերջնարդյունքներով: Փորձարկման վերջնական արդյունքները հունվարին կներկայացվի համալսարանի կենտրոնական ուսումնամեթոդական վարչության քննարկմանը և կտրվի նրա ամփոփ գնահատականը:

ABSTRACT

Larisa Avetisyan

Yerevan State Medical University after M. Heratsi,

Head of The Educational Quality Assessment and Assurance Centre

Different knowledge assessment methods, such as portfolios, clinical examinations, case simulation examinations, etc., are used in medical education. Only combination of different assessment methods is able to partly compensate disadvantages of each separate method. Test as knowledge assessment method is used in YSMU since 2003. Taking into account fact that only two types of test questions are used during examinations in YSMU and fact that practical skills can't be evaluated by paper or computer based tests, importance of changes in current system can't be overestimated.

New method developed in April of 2015 is aimed to provide uniform educational process: to motivate students for day to day learning by everyday assessments, ensure feedback and highlight some components of education such as research, and individual work.

New assessment system consist of following components

- assessment of daily assignments
- test



- research
- oral examination



New model was tested during fall semester of 2015 as pilot project. After implementation of system quiz among students was conducted by QA center of university. Questionnaires were constructed of questions dedicated to assessment of hall system and its components as well as comparative analyze with previous system. 92% of students passed thru new model where involved in quiz. 52.7% of respondents gave 5 (highest) points to new implemented system and only 1.8% 1 point. 23% suggested to double points for research component. All components of system were assessed as highly objective by 89% of respondents. 83% of students were satisfied by gained learning outcomes.

Final results of pilot project implementation will be reported on central educational-methodological committee meeting in June 2016